Գ·ԼՈՒԽ ԻԶ·

Վանք Հայոց 'ի լեռնակողմն։ Կարապետ վարդապետ։ Սղէհ Էյտպ։ Ս·Լուսաւորիչ։ Առաջն Երուսաղէմի 'ի Թաթարաց։ Հեթում Ա· Յիշատակարան։ Քերթք։

ԱՅԺ քան զտիրել Սալահատտինի Ս· Երկրին՝ միաբանք Հայոց բնակէին 'ի վանս լեռնակողմանն, որ ըստ Արաբացւոց կոչի Ա.Ն Քեարիմ. և ոչ ոք նեղէր և կամ պահանջէր ինչ 'ի նոցանէ։ Իսկ յորժամ անկաւ երկիրն ընդ իշխանութեամբ Արաբացւոց, հարկահանք նոցին պէսպէս պատճառանօք սկսան նեղել զնոսա։ Իսկ միաբանաց ոչ կարացեալ առնել ինչ՝ մատուցեալ առ քաղաքապետն ետուն գրել նմա զամենայն տառապանս իւրեանց առ Սուլթանն Եգիպտոսի, որոյ անունն էր էլ Մէլիքի Սալիհի Նա'մէ, օրպէս տեսանի 'ի վերնագիր հրովարտակին, յորում է և գիր քաղաքապետին՝ պահեալ 'ի շարս գրոց Ս· Աթոռոյս, զորոց թարգմանութիւնն դնեմք ասա։

Ի մասն երկրին և 'ի շրջակայս նորա բնակին կալուածատէրք, 'ի վանս Այն Քերիմի 'ի լեռնակողմն Երուսաղէմի, ուր էր եկեղեցին 'ի ձեռս նոցա նախ քան զտիրելն Երուսաղէմի, որպէս և է ցարդ· եւ նահանգն այն որոշեալ էր, եւ չէր ոք որ հակառակ կայր նոցա, ոչ վանաց ոչ եկեղեցւոյն եւ ոչ սովորութեանց նոցին։ Իսկ յորժամ եմուտ նահանգն այն 'ի կարգ սեփհականութեան· նոքա որք տակաւին բնակէին անդ, աղաչեցին դարձեալ որոշել զայն և մի հակառակիլ· եւ 'ի սմին ժամանակի յորժամ դարձաւ 'ի սեփհականութիւն, արգել զնոսա տէր երկրին յեկեղեցւոյ, 'ի պաշտամանց և յայլ սովորութեանց նոցին։ Եւ կալուածատէրքն ունին 'ի ձեռս իւրեանց հրովարտակ 'ի ժամանակէ Սուլթանին, որ կոչի ԷՏԻՊԷ Նասրէ· դաշինք նորա է բառնալ 'ի նոցանէ զնեղութիւնս և զվնասս, առնել զարդարութիւն և զողորմութիւն· ունին դարձեալ վճիռ յառաջին դատաւորաց և դիւանոց, և խնդրեն 'ի դթութենէ ձերմէ տալ հրովարտակ, վարիլ ըստ մտաց նոցին, և առանց նեղութեան կատարել զսո-